407 Վաղուց էիր, Հիսո՛ւս, ինձ ընտրել

1. Վաղուց էիր, Հիսո՛ւս, ինձ ընտրել
Եվ խաչին ինձ համար գամվել,
Սուրբ Հոգովդ ինձ պահապանել,
Մեռած հոգիս դեպ Քեզ ուղղել:
Բաց են դռները սրտիս,
Այցելի՛ր, այցելի՛ր, Սուրբ Հոգի:
Վառիր Հոգուդ կրակով,
Այցելի՛ր, այցելի՛ր, Սուրբ Հոգի:
Ճերմակաթույր աղավնի,
Այցելի՛ր, այցելի՛ր, Սուրբ Հոգի:
Մեղմ ու խաղաղ ջերմ քամի,
Այցելի՛ր, այցելի՛ր, Սուրբ Հոգի:

2. Եկեք միաբան մենք ապրենք
Եվ իրարից չբաժանվենք,
Առաջ մեր մեղքերը տեսնենք,
Աստծո սիրով միմյանց սիրենք:
Պենտեկոստե է այսօր,
Այցելի՛ր, այցելի՛ր, Սուրբ Հոգի:
Այսօր և այսուհետև
Այցելի՛ր, այցելի՛ր, Սուրբ Հոգի:
Հոգով լցվենք, զորանանք,
Այցելի՛ր, այցելի՛ր, Սուրբ Հոգի:
Աստծու սիրով քաղցրանանք,
Այցելի՛ր, այցելի՛ր, Սուրբ Հոգի: